

ցայտուն կերպով դրսևորվում է պատմողի բերած օրինակներում.

— Նդել է մի աշակիսի դեպք. Աբովյանը հանձն է տնել իր հայրենի գյուղի՝ Քանաքեռի բնակիչների շահերի պաշտպանությունը: Պարսից բեկերը, որոնք մնացել էին Երևանի շրջակայքում, ռուսական զորքերի գալուց հետո, անօրինական կերպով գյուղացիներից խլել էին «Մուրատ-Յափախ» ամենաբերրի հողամասը: Խաչատուր Աբովյանի հետապնդումների շնորհիվ այդ հողամասը նորից վերադարձվում է գյուղացիներին: Այդ օրվանից անցել է ավելի քան 100 տարի: Ներկայումս «Մուրատ-Յափախ» հողամասը մշակվում է կոլխոզի տրակտորներով և առատ բերք է տալիս: Բայց դեռ այսօր էլ շատ ծերունի-կոլխոզիկներ պահպանում են Խաչատուր Աբովյանի այդ պաշտպանությանը վերաբերող հուշերը:

1848 թվի ապրիլի 14-ին մեծ գրողը տնից դուրս եկավ ու այլևս ետ չվերադարձավ: Մի քանի օր տևող որոնումները ոչ մի արդյունք չտվին: Հայտնի է, որ վերջին օրերին Խաչատուր Աբովյանը եղել է մոռայված, մտախոհ, լուակյաց ու հրաժարվել է սնունդ ընդունելուց: Դժվար է ասել, թե ինչպես է նա մահ գտել, բայց և այնպես պարզ է, որ դրանում հանցավոր են մտք ու զգացում, որոնք իշխում էին այն տարիներին: Ըստ հարազատներիս պատմածների ինձ հայտնի է, որ պապս հաճախ էր կրկնում այս խոսքերը. «Ամեն ժամ մտածել եմ, որ իմ վերջը — դա Միբիրն է»:

Գրողի կինը՝ էմիլիա Աբովյանը խնամքով պահպանել է նրա ձեռագիրներն ու գրքերը: Ամեն անգամ, երբ գոան բախոց էր լավում, նա վեր էր թռչում տեղից ու նրան թվում էր, թե այդ ամուսինն է վերադարձել: Դժբախտ

կինը մահացավ 1870 թվին: Խաչատուր Աբովյանի գրական ժառանգությունը անցավ հորս ձեռքը, իսկ նրա մահվանից հետո էլ, 1896 թվին, անցավ մեր ձեռքը: Թշնամու արշավանքների օրերին, երբ հարկադրված էինք մեր ամբողջ ունեցվածքը լքելու և երբ ամեն քայլափոխին վտանգ էր սպառնում, մենք ամեն ճիգ գործադրեցինք փրկելու համար այն թանկարժեք ձեռագիրները, որոնց վիճակով չհետաքրքրվեցին ոչ ցարական աստիճանավորները և ոչ էլ սրանց փոխարեն իշխանության գլուխ անցած դաշնակները:

1917 թվին Ալեքսանդրոպոլում իմ աշակերտներից մեկը մի նամակ բերեց մոտս, որ ինչպես պարզվեց, ստորագրված էր Խաչատուր Աբովյանի ձեռքով: Երեսան պատմեց, որ մի խանութում խանութպանը այդպիսի թերթերում վաճառված մթերքներ էր փաթաթում: Ես վազեցի այդ խանութը, որպեսզի պահանջվող ամեն մի գնով ձեռք բերեի այդ փաստաթղթերը: Սակայն, «Խաչատուր Աբովյանի գործ»-ից, որ այլ թղթերի հետ միասին խանութպանը գնել էր Երևանի նահանգային արխիվի աստիճանավորներից, այլևս ոչինչ չէր մնացել: Պատմական արժեք ներկայացնող փաստաթղթերը օգտագործվել էին մթերքների փաթաթելու համար:

Սովետական իշխանության տարիներին մենք Պետական Գրական թանգարանին հանձնեցինք անհայտ նկարչի կողմից պատրաստված Աբովյանի միակ յուղաներկ նկարը, «Վերք Հայաստանի» վեպի երկու ձեռագիր օրինակները, տասնյակ այլ ձեռագիրներ, նամակներ ու փաստաթղթեր, որոնց թվում նաև քրդական ֆոլկլորի գրանցումների տետրը և 1917 թվին գտնված նամակը: Խաչատուր Աբովյանի գրական ժառանգությունն այսօր դարձել է համաժողովրդական սեփականություն:

ԵՐԱՆԻ ԾԱՀԱՁԻՉ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՆՈՐԱԳՅՈՒՏ ՄԻ ՎԱՎԵՐԱԿԱՆԻ ԱՌԹԻՎ

«Սովետական Հայաստան» օրաթերթի 1948 թ. ապրիլի 7-ի համարում մի հոդված տպագրվեց Խաչատուր Աբովյանին վերաբերող վերջերս հայտնաբերված մի նոր վավերականի ու նրա համառոտ բովանդակության մասին^{*)}:

Մեր ուշադրությունից բնականաբար վրբիպել չէր կարող Խաչատուր Աբովյանին վերաբերող նոր վավերականի հայտնաբերման հանգամանքը, քանի որ երկար ժամանակից ի վեր զբաղվում ենք հայ այդ նշանավոր գրողի ու մեծ մարդու կյանքի և գործունեության ուսումնասիրությանը. ուստի և ուշադրությամբ այդ համառոտ ու հապճեպ հոդված հոդվածը կարդալուց հետո շտապեցինք տեսնել ու թերթել բուն իսկ

^{*)} Ա. Ասատրյան և Գ. Ստեփանյան. — Նոր նյութեր Խաչատուր Աբովյանի և նրա ժամանակակիցների մասին, «Ս. Հ.» № 3231, էջ 3:

վավերականը, որ ձեռք էր բերել Հայկական ՄՍՄ-ի Գիտությունների Ակադեմիայի Ս. Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտը:

Նախ քան այդ վավերականին անդրադառնալը, պետք է ասենք, որ Խ. Աբովյանի կենսագրության մեջ մի քանի առեղծվածներ կան, որոնք, ստույգ վավերականների պակասության պատճառով, դեռ մնում են չբլուծված. միաժամանակ պիտի ավելացնենք, որ այս ուղղությամբ նոր վավերականներ որոնելու և գտնելու դռները դեռ իսպառ չեն փակված մեր առջև: Ծատ հեռու շերտանք, հենց մեր Պետարխիվի ֆոնդերը, այս տեսակետից, դեռ վերջնականապես լրիվ չեն հետազոտված, էլ չենք խոսում Վրաստանի Պետական կենտրոնական արխիվի մասին, որ, Աբովյանին վերաբերող վավերականներ գտնելու տեսակետից, նույնպես հարկավոր չափով չի նայված:

Վերջին ժամանակներս այս երկու արխիվներում հայտնաբերված նոր վավերականների շնորհիվ պարզվեցին գոյություն ունեցող առեղծվածներից երկուսը: Ծվ ահա պատահաբար հայտնաբերված այս վավերականով էլ պարզվում է մի երրորդ առեղծված:

Ավելորդ չենք համարում այստեղ մեջ բերել այդ երեք պարզաբանված — առեղծվածները: Առաջին առեղծվածն այն էր, որ Աբովյանը Գորպատ գնալու ժամանակ, երբ 1830 թ. օգոստոսի 25-ին հասնում է Պետերբուրգ, այստեղ իսկույն սկսում է տրոնել իր մանկական ընկեր Ստեփանոսին, որին և գտնում է:

Արդ հարց է ծագում, ո՞վ է եղել այդ մանկական ընկեր Ստեփանոսը. եթե նա եղած լիներ Ստեփանոս Նազարյանցը, ապա երբ կարող էր եկած լինել Պետերբուրգ ու ծառայության մտած: Այս առեղծվածը չի կարողացել լուծել ոչ հանգուցյալ Լեոն, Ս. Նազարյանցի մասին գրած իր սովոր կենսագրականի մեջ, և ոչ էլ մենք, Աբովյանի մասին մեր գրած կենսագրականի մեջ: Վերջերս Գրիգոր Հարությունյանի կողմից ՀՄՍՄ Պետական կենտրոնական արխիվում հայտնաբերված վավերականներից պարզվեց, որ Պետերբուրգում Աբովյանի որոնած Ստեփանոսը եղել է ոչ թե Ստեփանոս Նազարյանցը, այլ Ստեփանոս Գասպարյանը, որը նույնպես Աբովյանի մանկական դասընկերն է եղել Ներսիսյան դպրոցում*):

Երկրորդ առեղծվածն այն է, որ մինչև

*) Գ. Հարությունյան.— Խ. Աբովյանի և Ս. Նազարյանի կենսագրության շուրջը առեղծված մի առեղծվածի լուծումը. «Էջմիածին» ամսագիր 1947 թ. հուլիս-օգոստոս, էջ 61:

վերջերս մեզ հայտնի չէր, թե Աբովյանը, Ներսես կաթողիկոսի 1846 թ. մայիսի 13-ին Երևան ժամանելու առթիվ, իր ո՞ր անվանել վարժունքի համար է ենթարկված եղել երեք օրվա տնային կալանքի, փոխարքա Վորոնցովի հրամանով: Վերջերս Վրաստանի Պետական կենտրոնական արխիվում մի վավերական հայտնաբերվեց, որից պարզվում է, որ Աբովյանը կաթողիկոսին ընդառաջ և դուրս եկած եղել ոչ պաշտոնական համազգեստով, այլ հասարակ ամառային սպիտակ զգեստով և այս մասին բողոք ներկայացնողը եղել է Երևանի գավառապետ Նիկիֆոր Բլավատսկին*):

Երրորդ առեղծվածն այն է, որ մեզ մինչև այսօր անհայտ էր փոխարքա Վորոնցովի տիկնոջ կողմից Աբովյանի հրավիրված լինելը Թիֆլիսի Ս. Նունեի օրիորդաց դպրոցում պաշտոնավարելու համար և առաջին անգամ այս մասին տեղեկություն է հաղորդում հայտնաբերված նոր վավերականը: Նոր վավերականից մեջ ենք բերում Աբովյանին նվիրված ոտանավորի այն տողերը, որոնց մեջ հայտնվում է այդ նորությունը.

«Ըստ հաճութեան տիկնոջ մեծի
Փոխարքային Վորոնցովի
Ի դպրոցի Նունեայ կուսի
Նշանակեալ պետ մեկուսի:
Մինչ պատրաստեալ ի չու յայսկոյս
Առեալ գտուն, դամենայն գոյս
Ի գիշերի ընդ արշալոյս
Յերրորդ աւուր Ապրիլ ամսոյս
Յանկարծ կորեալ իմ Ապովեան,
Թափուր թողեալ զիւր ննջարան
Ի յոյզ մատեաւ քաղաքն համայն,
Յիշխանաց իւր առեալ հրաման.
Անմարդայայտ անհետանայ
Ամենեցուն թազուն մնայ:

Այս տողերից երևում է, որ Աբովյանը պաշտոնի է հրավիրված եղել Թիֆլիսի Ս. Նունեի օրիորդաց դպրոցը և պատրաստվում է եղել տնով-տեղով փոխադրվել Թիֆլիս, երբ անհայտացել է: Սրա հետ կապված պարզվում է և այն խնդիրը, որ Աբովյանը իր անհայտանալուց առաջ իբր թե մի թուլի է ստացած եղել պատրիարքից, որը, Աբխիզ ասելով և ուրիշների կարծիքով, պատճառ է հանդիսացել նրա անհայտացման:

Արդ հարց է ծագում, թե այդ ի՞նչ թուլի է եղել, ումից է ստացված եղել և ի՞նչ բովանդակություն և ունեցել: Որ Աբովյանն իր անհայտանալուց առաջ մի թուլի ստացել էր, այդ ճիշտ է, բայց, ինչպես ցույց է տալիս այս նոր վավերականը, այդ թուլիթը

**) «Коммунист» օրաթիվ № 76 1948 թ.:

նա ստացել էր ոչ թե պատրիարքից, այլ փոխարքա Վորոնցովի տիկնոջից:

Աբովյանի հրաժարականի պատմությունից էլ երևում է, որ դպրոցական վարչությունը, ընդունելով նրա հրաժարականը, պատվիրել էր դպրոցը Տուրկեստանովին հանձնելուց հետո անմիջապես Թիֆլիս գալ և ծառայության մտնել Նորին Վեհափառություն Ներսես կաթողիկոսի իրավասության տակ. այս առթիվ արդեն Աբովյանը հրավիրված էր ստացել 1848 թվի փետրվարի 21-ին № 111 գրությունը*):

Կա մի ուրիշ վավերական էլ, որ վերաբերում է Աբովյանի հոգեկան վիճակին, նրա անհայտանալուց առաջ: Այդ էլ Աբովյանի կնոջ էմիլիայի այն պատասխանն է, որ նա տվել էր Սրբանի ռատիկանապետ Մորախավեցին, երբ վերջինս դավառապետ Նիկիֆոր Բլավատսկու հանձնարարությամբ, պաշտոնական թղթով խնդրել էր նրան տեղեկություններ հաղորդել իր ամուսնու բացակայելու մասին:

«Ընդհանրապես, պե՞տք է ասեմ, — գրում է էմիլիան իր պատասխանում, — որ ես ոչինչ և ոչինչ չգիտեմ նրա բացակայելու մասին, բացի նրանից, որ ես նկատել եմ նրա մեջ մեծ փոփոխություն և մեծ հոգեկան տանջանք ու թախիծ, նամանավանդ այն ժամանակից ի վեր, երբ նա թուղթ էր ստացել իր Թիֆլիս փոխադրության մասին և ինքն էլ ասում էր, թե ցալում է, որ որոշած է եղել փոխել իր ծառայության բնույթը»: Այս հարցմունքի և պատասխանի գրությունները մենք նույնպես զետեղել ենք մեր «Դիվան Խաչատուր Աբովյանի» գրքի երկրորդ հատորի մեջ:

Կարծում ենք, որ նորագույն այս վավերականը պարզում է նաև պատրիարքին վերադրված հեքիաթական թղթի պատմությունը: Պետք է կարծել, որ ստացված թուղթը Վորոնցովի տիկնոջ պաշտոնական հրավերն է եղել, որով նա Աբովյանին առաջարկել էր Թիֆլիս փոխադրվել և Ս. Նունեի օրինորդաց դպրոցում ստանձնել իրեն հատկացված պաշտոնը**):

Այժմ անդրադառնանք նորահայտ վավերականին, որին ավելի մեծ արժեք է վերագրված վերը նշած հոդվածի մեջ, քան իրոք նա ներկայացնում է: Այս վավերակա-

նը կրում է հետևյալ խորագիրը. — «Ձափական և արձակ քերթուածք Առաքել վարժապետի Արարատեանց — հեղինակութիւնք, նմանողութիւնք և թարգմանութիւնք ընդ ժամանակս ժամանակս անդստին յաշակերտութենէ իրմէ, այժմ աստ ի մի վայր խմբագրեալք ի պէտս բանասիրաց իւրով իսկ ձեռամբ յամի 1855 ի Տփլիսա»:

Այս խորագիրն ինքքստինքյան արդեն բընորոշում է սուլյն վավերականի բովանդակությունն ու ընույթը: Սա գրվածքների մի ընդարձակ հավաքածու է, ամփոփված կազմված երկու ստվար տետրակների մեջ*), գրվածքների մեծ մասը ուսանավորներ են, իսկ մնացորդը — արձակ: Ուսանավորները չոր ու ցամաք, անշունչ և անարյուն են և հանգապաշտություն — հանգերի ժողովածու են ներկայացնում իրենցից, իսկ արձակներն էլ անիմաստ են. թե շափածո և թե արձակ գրվածքները միասին վերցրած ամբողջովին սքրլաստիկական են, և որ ամենազլխավորն է, զուրկ կարևոր փաստերից: Ամբողջ հավաքածուի մեջ մենք միայն երկու կարևոր նյութ նկատեցինք, որոնցից մեկը Աբովյանին նվիրված, 97 տողից բաղկացած, ուսանավորն է, իսկ մյուսը՝ կենսագրական նյութեր Ոսկերչյան ավագ քահանայի մասին, որը զորապետ Ցիցիանովի արշավանքի ժամանակ առաջնորդել է Վաղարշապատից ու նրա շրջակայքից Թիֆլիս դաղթած ու այնտեղ Հավաքար թողամասը կազմած հայերին: Պետք է ասել, որ Աբովյանին վերաբերող նյութն էլ շատ կցկտուր ու հակիրճ է: Առաքել Արարատյանը, որպես Աբովյանի մոտ ընկերը, անկասկած, ավելին գիտեր Աբովյանի մասին ու կարող էր ավելի լրիվ տեղեկություններ հաղորդել նրա մասին, քան հաղորդել է իր այդ ուսանավորի մեջ, ստորև բերում ենք նրա այդ ուսանավորն ամբողջությամբ. —

Խաչատուր Աւետիքեան Ապովեանց
Հատեալ ի ստեանց ուսման գրոց
Նախածնող հօր որբոց,
Ի Պաւղոսի**) մտի կրթոց.
Քերթողութեան դիւել զծուծ,
Ուր հոգեսուն համշիրակաց
Մի էր Խաչիկն իմ Ապովեանց,
Քանքարաճոխ, ուշիմապանծ
Շողափայլէր ըստ անգին ականց:
Երկաթաբար ես ընդ նմա
Մտէ ի սիրտ մազնիսացայ.

*) Ն. Շահագիր. — Դիվան Խաչատուր Աբովյանի, էջ 191 և 222.

**) Պաշտոնի մասին բնագիր — ուսանավորի մեջ ստված է —

«Ի դպրոցի Նունեայ կուսի
Նշանակեալ պետ մեկուսի»:

Կարծում ենք տեսչի պաշտոն է առաջարկվել նրան, իսկ մեկուսի բառը հանգի համար է դրված:

*) Այդ տետրակները, մինչև Գրականության ինստիտուտի կողմից ձեռք բերվելը, գտնվել են Ռիգայում՝ Առաքել Արարատյանի ժառանգների մոտ:

**) Պողոս վարդապետ Ղարաբաղցի, բաշ դասառու բերթողության:

Թէ դէմ առ դէմ և թէ բացեալ
 Յարգել զնա ոչ վերջացայ:
 Ել ի Մասիս, և էջ անտի
 Ընդ բանիբունն Պարբոտի-
 Ուսման ծարաւ ըստ կարօտի,
 Անց ի Դորպատն Լիֆլիանդի:
 Ուստի դարձեալ յաշխարհ Տփլիսեաց
 Յետ քառամեայ պանդխտութեանց,
 Որպէս մեղու փեթակ՝ ի մտաց
 Կանձեալ խորիսխ մեղու ուսմանց:
 Եղև յագուրդ սովեալ մանկանց,
 Ըստ Երոպեան գիտնականաց,
 Վարդապետեալ յոճ դիւրիմաց,
 Բացեալ գոսկի հանքս համբակաց:
 Եղև տեսուչ քաջ և արի
 Նահանգական վարժարանի:
 Ընդ էմիլեայ օրիորդի
 Զուգեալ, ծնաւ Վարդան որդի:
 Ի Վրաց վագեաց նա յԵրևան,
 Հանել և անդ զշնորհսն յերևան:
 Ուր զամս հինգ զգիւլ, զաւան
 Արար ջանիւք իւր գոհ, հաւան
 Գոգ քան զքառորդ միոյ դարու,
 Ինձ հոգեկից այրն մեծարու:
 Թէ ի ժամու, տարածամու:
 Եղէ նմա ձեռնկալու:
 Ըստ հաճութեան տիկնոջ մեծի
 Փոխարքային Վօրօնցովի
 Ի դպրոցի Նունեայ կուսի
 Նշանակեալ պետ մեկուսի:
 Մինչ պատրաստեալ ի շու յայսկոյս
 Առեալ զտուն, զամենայն գոյս
 Ի գիշերի ընդ արշալոյս
 Յերրորդ աւուր Ապրիլ ամսոյս,*)
 Յանկարծ կորեաւ իմ Ապովեան
 Թաղուր թողեալ զիւր ննջարան:
 Ի յոյգ մատեաւ քաղաքն համայն
 Յիշխանաց իւր առեալ հրաման:
 Անմարդայայտ անհետանայ,
 Ամենեցուն թագուն մնայ:
 Զախորդութի՛ն, թէ իբր զնա
 Անակնկալ խլեալ, բառնայ:
 Աղօտ կարծիք եղև ոմանց,
 Թէ սպանաւ նա յայլ ազգեաց-
 Խորհեալ ի հոր ինչ արմտեաց
 Կազանասիրտ յանօրինաց:
 Այսպէս աշխարհ վարձատրեաց
 Զարժանայարգն Ապովեանց:
 Յամենայնէ հանեալ ի բաց
 Միաստովոր մեծարանաց:
 Քահանայից ի մաղթանաց,
 Ի փրկագործ պատարագաց,
 Յերգոց նուագաց, ի սաղմոսաց
 Սարկաւագաց, կղերց ժամատաց:
 Եւ յողջունէ ընդ իւրոցն յիննոյ,

Ի պատանէ, ի բուն դետնոյ,
 Ըստ շնաշխարհիկ ընտրեալ գիտնոյ
 Չառեալ ինչ շուր ի ստորնոյ:
 Գուցէ սուրբ մայրն էջմիածին
 Խնդրեաց վրժ ուխտաւորին,
 Որ վասն ուսման շեկաց ի նմին,
 Մտեալ լիճակ յաշխարհային:
 Եւ կամ Մասիս ցասեալ պատժեաց,
 Որ զինքն երկիցս ոտնակոխեաց-
 Կամ Քանաքեռ անէծս կարդաց
 Լքեալ նորան ի շնորհաց:
 Զայս լսելով մի դիւրակարծ,
 Թէ զերթ հողմ գծուի բաղդ զնա
 ցնդեաց.

Սերմըն ուսման, զոր նա ցանեաց
 Յանդա մտաց պատենակաց,
 Բուռեալ, աճեալ պողպարեաց,
 Ոչ սակաւուց քիմս անուշեաց:
 Յաւերժական յիշատակաց
 Եղեալ կոթող անմահ փառաց:
 Բաց յայսմանէ երկունք գրչին
 Մինչ ընդ մամլով խոնարհեցին,
 Անջինչ արձանք նմա լիցին
 Յերախտագէտ սիրտս ազգին:
 Թող անաբանք կարկատեսցեն,
 Զինչ և կամին բարբանջեսցեն
 Կերմանացիք զնա գիտեն
 Յիւրեանց մատեան զնա զովեն:
 Զի՛ մարգարիտ աքաղաղին,
 Կուտ նորա է անարգ գարին:
 Էշն ի՛նչ գիտէ զարմաւոյ գին,
 Եւ կամ դատել զձայն սոխակին:
 Այսպէս իմա՛, զպարսաւազրաց
 Անձնանուէր ազգասիրաց:

Ինչ վերաբովեալ է երկրորդ նյութին, ա-
 պա Արարատյանն իր իմացածն այս մասին
 արդեն հաղորդել է առանձին գրքուլով,
 քանի որ Ոսկերչյանը նրա ազգականը, բա-
 րերարը, ուսում տվողը և մարդ դարձնողն
 է եղել:

Մրանց հեղինակի՝ Առաքել Արարատյա-
 նի մասին մենք մի լիակատար ծանոթա-
 գրութիւն ենք գրել ու զետեղել մեր «Դի-
 վան Խաչատուր Աբովյանի» գրքի երկրորդ
 հատորի մեջ. այստեղ կարող ենք միայն
 ավելացնել այն, որ վերջին ժամանակա-
 շրջանում թե Նազարյանցը և թե Աբովյանը
 իրենց համոզմունքներով պառակտվել էին
 Արարատյանի հետ ու հենց այս հաջա-
 մանքն էլ՝ կարծում ենք, ազգած պիտի լի-
 մի Աբովյանի «Նախաշաւիղ»-ի քննադա-
 տության գործի վրա*):

*) Առաքել Արարատյանը, երևում է, չի հասկը-
 ցել Աբովյանի «Նախաշաւիղ»-ի կարևոր խորհուրդը
 և բժախնդրութամբ վեջաբերվելով նրա քննության
 գործին, պատճառ է եղել ձեռագրի երկիցս վերա-
 դարձմանը հեղինակին՝ փոփոխության այնպիսի պա-
 հանջներով, որ Աբովյանը չէր կարող անել:

*) Այդ տեղի է ունեցել ոչ թե 1848 թվ. ապրիլի
 3-ին, այլ 2-ին:

Մի անհրաժեշտ բացատրություն էլ ցանկանում ենք տալ Աբովյանի հոր անվան մասին, որ նույնպես շփոթ առարկությունք շոշափված է վերոհիշյալ հողավածի մեջ և նրա հոր Ավետիք անունը, ըստ այս նորագյուտ վավերականի, հիմնավորված է համարվում. այս նշանակում է, որ մեր «Դիվան Խաչատուր Աբովյանի» գրքում մեջ բերված մի շարք վավերականներով չեն հիմնավորվել նրա հոր անվան «Հարություն» լինելը: Արդ, այստեղ ավելորդ չենք համարում մեջ բերել նոր վավերականներ ևս, որոնցից պարզ երևում է, որ Աբովյանի հոր անունը «Հարություն» է եղել, և ոչ «Ավետիք»:

1. Հենց այս նույն Առաքել Արարատյանի 1831 թ. մարտի 12-ին գրած և Դորպատ՝ Աբովյանին հասցեագրած նամակում կարդում ենք հետևյալ տողերը. — «...Ձազգականացյ լի՛ր անհոգ, զի որպէս զիր նոցա ցուցանէ, նամնապէս և ամենայն երթեկէք զնոյն պատմեն լինել առողջ և յաջող յամենայնի, բայց ի կարօտութենէ Ձերմէ, շունելով ինչ կարիս: Բազում անգամ գրեցի առ Յովսէփ վարդապետն Բժշկեան գրել ինձ զընտանեացդ և ծանօթացուցանել զիս ընդ նոսա գրով, բայց մինչև ցայժմ ոչինչ ստացայ ի նմանէ զդարձ, վասնորոյ ես ի նորումս ընդ թղթոյ ձերում առանձին թուղթ ուղղեալ առ մեծարու հայրդ և իմ Յարութիւն Աբովեան, յորդոր եղեալ անընդհատ առնել զթուղթ իւր ծանօթարար ամենայն որպիսութեանց ձերայնոց, որով և ես զձեզ արարից աներկեան...»:

Այսպիսով տեսնում ենք, որ Առաքել Արարատյանը հետևողական չի եղել, մի տեղում Աբովյանի հոր անունը Հարություն հիշելով, մի այլ տեղում Ավետիք:

2. Երկրորդ վավերականը ևս մի նամակ է, որ բերում ենք այստեղ.

Ձերդ գերազանցութեանդ պարոն Ստեփան վեքիտիլին և իմ սիրելի հարսին (Թիֆլիս).

Նախապէս շատ սիրով ողջուն մատուցանեմ ձեզ և մեր երեխանց, որ քանի ժամանակէ ձեր գնալն միամտութեան գիր չեմ ստացեալ, ըստ որում խնդրեմ իմ ծերութիւն չի մոռանաք, քանզի ես ձեզ միշտ աղօթարար եմ. դարձեալ աղա փողի մասին, որ խոստացար թէ հասնյալ գնալուս, և ես թուղթ կու զրգիմ Թարխանովի վերայ, բայց այժմ հիմա որ Թարխանովն դուրս եկաւ և ուեզդնի նաչալնիկն ի մենջ սաստկապէս պահանջէ 15 մանեթ դրամ, վասնորոյ և մեք տասն աւուր ժամանակ առանք, որ ձեր

հրամանոց ռասպիսկեն հասնի մեզ, ըստ որում խնդրում ենք, եթէ ճշմարտապէս հասեալ է զգիրս ստանալոյդ, մեկ ռասպիսկա ուղարկես մեզ, որով մեք այնու ռասպիսկովն չի տանք, բայց եթէ ոչ կամենաս ուղարկելն, այնուհետև 15 մանեթ թող տան իմ որդեբրանցն որով և ինձ չէ պարտ դորանց զրգել, այլ և լավ է ճշմարտապէսն լինելն:

Մնամ ձեր աղօթարար հայր
Հարութիւն Աբովեան

1 ապրիլի 1850 ամի
ի գիւղն Քանաքեռ

Այս նամակն և՛ իր բովանդակությամբ և՛ իր ստորագրությամբ կատարելապէս հայրական է և ամենացայտուն վկայությունն է, որ Խաչատուր Աբովյանի հոր անունը եղել է Հարություն, և ոչ Ավետիք: Այլ բան է, որ այս նամակն իր գրություն ժամանակի թվականով չի համապատասխանում Խաչատուր Աբովյանի ցուցմունքին՝ իր հոր մահվան թվականի վերաբերմամբ: Աբովյանն իր «Օրագրեր»-ի մեջ գրել է, թե մի շաբթվա ընթացքում, 1834 թվի նոյեմբերի 21-ին, իր Դորպատ գտնված ժամանակը երեք իրեն մոտ մարդկանց մահվան բոթաբեր լուրն է ստացել — իր ուսուցիչ Հարութիւն վարդապետ Ալամդարյանի, ազնիվ բարեկամ Աղաջանի և քաղցր հոր՝ Հարություն Աբովյանի: Եվ այս առթիվ նա գրել է իր «Ողբերգութիւն» խորագրով ոտանավորը: Այս ոտանավորի մեջ կարևորն այն է մեզ համար, որ Խաչատուր Աբովյանը ինքը իր հորը Հարություն է կոչում, և ոչ Ավետիք:

«Ողբերգութիւն» խորագրով ոտանավորից այստեղ բերում ենք երեք տուն, որոնց մեջ բացահայտվում է, որ Աբովյանի ստացած բոթաբեր լուրն իր քաղցր հոր, արենակից ծնող Հարությունի մահվան է վերաբերում: Ոտանավորի լիակատար խորագիրն է «Ողբերգութիւն ի վերայ մահուան բազմերախտ ուսուցչին իմոյ Յարութիւն վարդապետի Ալամդարեանց, ազնիւ բարեկամին իմոյ Աղաջանայ Շիրմազանեանի, և քաղցր հօր իմոյ Յարութիւնի Աբովեանց, զորոց զբօսալուրն ի միում շաբաթոջ ստացայ ի լինելն իմ ի Դեբպա 1834 21 նոյեմբերի»: Ոտանավորը իրոք որ ողբերգական է և գրված է Աբովյանի գրչին հատուկ սիրուն գրաբարով, ի խորոց սրտի, բուն ու ջերմ զգացմունքով:

Ո՞ր սահման, ո՞ր դարձան ես երկից իմ վերայ,
 Ո՞ր մաշեն աղետանջ զիս անխիղճ, անմխիթար,
 Ո՞հ յումմե՞ ստացայ զձեռ սէր երկնամբարձ,
 Զորս յիշեալ կռչկոնիմ և տանջիմ շարաչար.

Անօգնական զիս անտէրունջ
 Անայցելու, անապաէն.

Դուք բողիք զիս միայնակ յայս աշխարհ դառնավայր:

Ելանէք, անցանիք շրջանէ ի շրջան,
 Ուր խմբին պարտեալ երկնագունդի հրեղինաց,
 Վերենմի՞ք լուսափայլ ի թև ամպոց յայն կայան.
 Ուր հրեուին, զմայլին հոգեհոյլի հրեշտակաց.

Դու բազմերախտ դաստիարակ
 Քննուշ իմ հայր, քաղցր բարեկամ,

Դուք անուն տօնելիք յափտեան անմոռաց:

Իմ ոսկերք, իմ երակք, հոգի, սիրտ, զգայարան,
 Զեօք շարժին, ձեօք խորհիմ ի յիմում մարմնի աստ:
 Մինն զուսումն, մինն զսէր, միսն զարիւն կենդանական,
 Որովք շնչեմ, կամ զորձեմ, ներգործեմ յերկրի աստ.

Դուք հեղիք ի յիս պատճառք իմ կենաց,
 Դուք ետուք ինձ կեալ հոգույս սիրեցեալք.

Եւ կրկին դուք տանիք զայնս ընդ ձեզ անանջատ:

3. Երրորդ վավերականները, դա Աբով-
 յանի ձեռքով լրացված հարցաթերթիկներն
 են, որոնց մեջ Աբովյանը իր հոր անունը
 Հարություն է հիշում և ոչ Ավետիք: Այդ
 հարցաթերթիկները պահվում են Հայկական
 ՍՍՄ Պետական կենտրոնական արխիվում:
 Ինչպես մեզ գրավոր հաղորդել է ավագ
 գիտ. աշխատող և մեր ազնիվ բարեկամ
 Մորուս Հասրաթյանը, հաշատուր Աբովյանի
 ձեռքով լրացրած այդպիսի հարցաթերթիկնե-
 րի հանդիպել է նա 1931 թվին նաև կենին-
 գրադի արխիվում. այդ հարցաթերթիկնե-
 րում նույնպես Հարություն է հիշատակված:
 Եվ վերջապես օտարների կողմից Աբովյա-
 նին հասցեագրված բազմաթիվ նամակնե-
 րում ու պաշտոնական գրություններում, ո-
 րոնք զետեղված են մեր «Դիվան հաշատուր
 Աբովյանի» գրքի առաջին հատորում, նրա
 հոր անունը նույնպես Հարություն է հիշ-
 ված:

Այս բոլորից հետո, կարծում ենք, տարա-

կույսի տեղիք չի մնում, որ Աբովյանի հոր
 անունը եղել է Հարություն: Այս բոլոր փաս-
 տերի կողքից անցնելով, և Վիպն վերջին
 նորագյուտ վավերականի վրա հենվելով,
 մեր նշված հոդվածի հեղինակները շտապել
 են հապճեպ եզրակացություն հանել, թե Ա-
 բովյանի հոր անունը պետք է ընդունել, որ
 եղել է Ավետիք և ոչ Հարություն: Ինչ վերա-
 բերում է այն խնդրին, որ մենք մեր «Դիվան
 հաշատուր Աբովյանի» գրքի առաջին հա-
 տորում զետեղել ենք նաև այնպիսի վավե-
 րականներ, որոնց մեջ նրա հոր անունը Ա-
 վետիք է հիշված, մի բան, որ հակասում է
 մեր կարծիքին նրա հոր անվան վերաբեր-
 մամբ, ապա պիտի ասենք, որ ուրիշ կերպ
 վարվել էլ չէինք կարող, մենք պարտավոր
 էինք ամենայն անաշուտությամբ գրքում զե-
 տեղել մեր կարծիքը թե հաստատող և թե
 բացասող բոլոր վավերականներն առանց
 խտրության:

